

ըի 5 ամիս և 25 օր=մահը ուրեմն պիտի լինի 1911 մարտ 23-ին):

Պ. Տէր-Միքաքեանը գուցէ մեղ կասէ, թէ նա թուաբանութեան դասագիրք է կազմել և ոչ պատմութեան. բայց միթէ մի գիտութիւն աւանդելով՝ ներելի է միւսները աղճատել. և միթէ գիտութիւնները միմեանց պակտաք չպիտի լրացնեն:

Մենք կցանկալինք, որ լայտնի մանկավարժ պ. Տէր-Միքաքեանը մի փոքր տւելի բարեխիղն վերաբերուէր հետեւեալ դասադրքերը կազմելիս:

ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆ

## ԼՈՒՐԵՐ

Տաճկահայոց գործերը աւելի քան տարտամ վիճակի մէջ են. «Լումայ»ի ընթերցողները գիտեն, որ պատրիարք Դուրեան սրբազնը հրաժարուել է իւր պաշտօնից, ժողովրդի մի մասը գոհ նորա բռնած դիրքից՝ ուղերձներ է ուղարկում պատրիարքին, և ըստ պահան մամուլի մի մասը չատագովում է նորա բռնած դիրքը, միւս կողմից ազգի մի մասը դժգոհ է, որ պատրիարքը պաշտօնապէս հրաժարուած է, թէպէտ մասնաւոր կերպով դարձեալ վարում է պաշտօնի անյետածդելի պարտաւորութիւնները, բայց և այնպէս այդ ձեռվ նորա յամառումը մի առանձին բարեփոխութիւն առաջ չբերեց Տաճկահայոց գործերի մէջ, բայցի այն՝ որ կուսակցութիւնները աւելի լարուեցին, կառավարութիւնը մատ մատի չդրեց Դուրեանի հրաժարման առիթ եղող Ալանայի և ընդհանրապէս Տաճկահայերի տնտեսական վիճակը բարւոքելու: Բոլոր օգուտը այդ հրաժարականի այն եղաւ, որ մի անդամ էլ եւրոպայի ուշադրութիւնը դարձաւ Տաճկաստանի դժբաղտ հայերի ու նոցա ա-

մալացած հալրենիքի վերայ, որպէս զի մի անգամ էլ խորին մռացութեան մատնուկն նոքա և գուցէ իբրև վրէմ նորանոր արհաւիրքներ նիւթուեն հալութեան դեռ կանգուն մնացող հատուածների համար...

Որքան էլ մենք կամենանք խուլ և կոյր ծեանալ, բայց իրողութիւնն այն է, որ վերջին մի քանի տասնեակ տարինեւրում հալերը այս և այն տէրութեան մէջ մեր աչքի առաջ պարբերաբար կոտորում են, հալերի թիւը պարբերաբար պարագանել է, Հայաստանը պիստեմատիք կերպով դատարկւում է և ամայանում. չէ կարելի չնկատել այս խիստ կարևոր հանգամանքը և չմտածել սորա վերաբ:—Սպասել, որ թիւրքահայոց նշանաւոր աղդալին ժողովը կմտածէ առաջն առնել այն բնաջնջումին, որին ենթակալ է նորա խնամքին լանձնսւած թշուառ հալ ժողովուրդը, այդ մտացածին երազ է. Եշմիածնի ծալնը անզօր է այդ խնդիրներում, իսկ յեղափոխական կօմիտէաների նշանակութիւնը ընկել է ժողովրդի մէջ: Զկալ մի մարմին, որի ծալնը նշանակութիւն ունենալ իշխողների համար:

Մենք կարծում ենք, որ նպատակալարմար կլինէր մի հայկական համագումար կազիակերպել ամեն երկրների հալերից և կական համագումար կազիակերպել ամեն երկրների հալերից և աղքովին որոշել այն քաղաքական դիրքը, որին հալերը պարտաւոր լինեն հետեւել հալ աղքի թշուու մնացորդների դոյրւթիւնը ապահովելու պարբերական կոտորածներից ու հալածանքից, իսկ Հայաստանը ամայանալուց:

Ղազանի համալսարանի իրաւաբանական բաժնի ուսանող Մովսէս Շանիձէ ռոռւսաց ցենզուրի պատմութիւնը՝ աշխատութեան համար համալսարանի խորհրդից պարզեատրուել է ոսկէ մեղալով: Ցանկալի կլինէր մի օր էլ տեսնել հրատարակուած կովկասեան ցենզուրայի պատմութիւնը և յատկապէս հայ ցենզորների պատմութիւնը, քաղուած պաշտօնական աղբիւրներից և տակաւին կենդանի հայ հեղինակների յիշողութիւններից վրայ հիմնուած: Կարծում ենք, որ այդ պատմութիւնը մեծ լոյս պիտի սփռէ ընդհանրապէս ոռոսահայոց գրականութեան գարգացման և մասնաւորապէս մեր կուսակցութիւնների

կազմակերպութեան ու զարգացման վերայ և մանաւանդ հայ մամուլի պատմութեան վերայ:

**Ամենայն Հայոց վեհ.** կաթողիկոսի շրջաբերական կոնդակի հիման վերայ թեմիս ս. Առաջնորդը մանրամասն աեղեկութիւններ է պահանջել բոլոր պետական և քաղաքային դպրոցների հայ կրօնուսոյցներից կրօնի դաստիառութեան վերաբերեալ զանազան խնդիրների մասին.

**Նոյեմբերի 21-ին** կայս. գիւղատնտեսական ընկերութեան նախաձեռնութեամբ Թիֆլիզում կատարուելու է պ. Քալանթարի երեսնամեայ գիւղատնտեսական գործունէութեան յօրելեանը:

**Փոխանորդ Կորիւն վարդապետի** աքսորից յետոյ Գանձակը վերջին տարիներս մնացել էր առանց առաջնորդական փոխանորդի. այժմ «Մշակա-ը հաղորդում է, որ այս օրերս այստեղ կատարուել է ժողովրդական ընտրութիւն և փոխանորդի պաշտօնի համար ձայների առաւելութեամբ ընտրուել է Գարեգին վ. Յովսէփեանը»:

**Մեզ հաղորդում են,** որ Թիֆլիզում մի քանի հոգի պատրաստութիւններ են տեսնում մի ուրիշ հայերէն ամսաթերթ հրատարակելու և իրը թէ այս հրատարակութեան համար խոստացուած է նոցա մի բարեգործի կողմից մի յայտնի գումար:

Խմբագիր Հրատարակիչ՝ ԳիհՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ

